զաքապետն և առ մեծամեծս, և առաքէր Ոստիկանս, զի տացեն վճարել Հայոց զպարտս բաժնիւ ըստ հրամանի Արքային և առցեն զտասանորդս, և եթէ ընդդիմասցին՝ գըրեսցեն գիր բաղմակնիք՝ զի առաքեսցէ 'ի Դուռն. իբրեւ ոչ առին յանձն Խորհրդականք և ոչ մատուցին ունկն յորդորական բանից նոցին, առաքեցին զՈստիկանս հանդերձ զօրականօք 'ի վանս, և նոցա եկեալ սկսան տալ ազգի ազգի նեղութիւնս և չարչարանս մտեալ 'ի սենեակս միաբանաց, և իշխողք քաղաքին անարգանօք և նախատանօք տանէին և բերէին զԽորհրդականս 'ի դատարան, եւ լուեալ պարտատերաց խուռն բազմութեամբ զեղան լցան 'ի գաւիթ եկեղեցւոյն, գոչումն և աղաղակ, արհամարհանք և բանք նախատանաց անասելի. տեսեալ Քաղաքապետին և Դատաւորին թէ այսու եւս չվճարի ինչ, կազմեցին ժողով մեծ եւ կոչեցին անդ զԽորհրդականս, ընթերցան 'ի լուր ամենեցուն զհրամանս Բդեշխին, և ասա սկսան բըռնադատել զնոսա վասն պարտուց, և իբրեւ տեսին թէ չիք հնար՝ արտաքսեցին զնոսա յատենէ անտի, և գրեցին առ Բդեշխն գիր բաղմակնիք, որպէս խնդրեալն էր։ Եւ հրեայք իսկ բերեալ էին հրովարտակ բաժնիւ պահանջել զառնելիս իւրեանց։ Բայց սպասէին գալստեան նորոյ Դատաւորի, և այսպէս մնացեալ միաբանաց 'ի յետին տառապանս լային և կոծէին զանձինս իւրեանց, վախչիլ ոչ կարէին, զի պահէին զճանապարհս նոցա զտիւ և զգիշեր, այլ միայն թագչիլ 'ի սենեակս, և թարգման Մուրատ դողդոջուն շրթամբ կակաչէր զանհեդեդ պատասխանիս իշխողաց, եւ վառէր զնոսա 'ի բարկութիւն կացուցանել զինուորս 'ի դուռն վանաց։ Ապա 'ի միում նուագի արիացեալ Խորհրդականաց չոքան 'ի Դատարան և 'ի ժողովի այլազգեաց ետուն պատասխանի, թէ չեն ինքեանք տերք Աթոռոյն, այլ Պատրիարքունք և Ազգապետք, և թէ չունին դրամս 'ի վճարումն պարտուց, և նոքա ոչ առաքեցին 'ի Կոստանդինուպօլսոյ, և 'ի Տէրութենէ ոչ եկն կրկին հրաման վասն այնըր, և ասա ծախեալ իբր 10,000 դահեկանս առին գիր 'ի նոցանէ, և ինքեանք եւս գրեալ առաքեցին 'ի Թագաւորեալ քաղաքն, և այսպէս զերծան առ ժամն 'ի ձեռաց նոցա, այլ ոչ էին յասպահովի, զի իշխողք երկրին պահան-